ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2021թ. թիվ 83-Ա

ԱՐՏԱԿ ԵԴՈՅԱՆԻՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 3 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»
ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ և 88-րդ հոդվածի 5-րդ մասերով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Արտակ Եդոյանին 2021 թվականի փետրվարի 16-ից ազատել «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի գործադիր տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2018թ. հոկտեմբերի 3-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Ա.Եդոյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետարանի քարտուղարության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը առձեռն կամ պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2/16/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. փետրվարի 16
ք.Վանաձոր